

ԿՈՆՍԱԴԻՒ ԿԱՐՄԵՏԻ ՄԵԼԻՔ - ԾԱՀԱԳԱՐՅԱՆ (ՏՄԲԱՋԻ ԽԱՉԱՆ)

(1857-1940)

ԹԱՍԱՐ ՂԱՅՐԱՊԵՏՅԱՆ

I

Այսօրվա ընթերցողին Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի անունը թիւ բան կարող է ասել (նրա ստեղծագործությունը ցարդ չի հրատարակվել), մինչդեռ նրա ներդրումը մեծ է և արևելահայ երգիծական գրականության, և ժողովրդագիտության, և մասնավորապես մեր հասարակական հիշողությունը արթուն պահելու գործում:

Ծննդել է 1857թ. ապրիլի 15-ին, Ծուշիում:^{*} Մերել է Խաչենի իշխանության Սողք գավառից 16-17-րդ դարերի սահմանագլխին Վարանդա տեղափոխված հայտնի Շահնազարյանների մելիքական տոհմից: Հինգ տարեկանում Կոնստանդինը զրկվում է հորից, և ընտանիքը մնում է հորեղբոր խնամքի տակ: Ութամյա տղան սկզբում հաճախում է «բանաստեղծ Արությունի» դպրոցը, որտեղ աշակերտներին ֆիզիկական պատիժների էին ենթարկում, ապա ուսումը շարունակում է ոռուսական դպրոցում: 1869թ. ընդունվում է Ծուշիի թեմական դպրոց, ուր աշակերտում է նշանավոր հայկաբան Մաղարիա Պլուզյանին: Թեմականում Կոնստանդինը սովորում է Գրիգոր Տեր-Շովիաննիսյանի (Մուրացան), Առաքել Բարախանյանի (Լեռ) և ուրիշների հետ: 1874թ., հինգ-վեց լավագույն աշակերտների թվում Կոնստանդինը ևս իրավունք է ստանում սովորելու էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր պարզորոշ դրսորվում են պատանու գրական հակումները: Տա խմբագրում է աշակերտական «Մանրանկար» ծեռագիր ամսագիրը: 1878թ. վերակացուների կամայականությունների դեմ ուղղված ուսանողական հուզումներին նասնակցելու պատճառով, Կոնստանդինը վտարվում է ճեմարանից: 1879-80թթ. ավագ դասատուի պաշտոնով աշխատում է Դերբենդի Մարիամյան օրիորդաց-ուսումնարանում, իսկ 1880թ. արևելյան լեզուներ ուսումնասիրելու նպատակով Մելիք-Շահնազարյանը ընդունվում է Սոսկվայի Լազարյան ճեմարանի լսարանական բաժին, սակայն նյութական միջոցների սղության պատճառով, ամիսներ անց վերադառնում է Դերբենդ և շարունակում իր մանկավարժական գործունեությունը: 1882թ. Կոնստանդինը տեղափոխվում է Թիֆլիս և մեկ տարի Յովնանյան դպրոցում ուսուցչություն անելուց հետո, 1883թ. իր չորս տարվա պաշտոնավարության ընթացքում խնայած միջոցներով մեկնում է Եվրոպա և ընդունվում Մոնպելիե (Ֆրանսիա) նշանավոր երկրագործական բարձրագույն դպրոց: Այնուհետև կարծ ժամանակով անցնում է Շվեյցարիա և ուսումնասիրում պանրագործությունը: 1883-85թթ. գրած հոդվածներում Մելիք-Շահնազարյանը կարևորում է գյուղատնտեսության դերը ժողովրդական տնտեսության զարգացման մեջ և արտասահմանց դրանք տպագրության է ուղարկում «Նոր դարին»: 1885թ. նա վերադառնում է Դերբենդ և զբաղվում գյուղատնտեսությամբ: 1886-ին տեղափոխվում է Վրաստանի Սագարեջոյի շրջան, գյուղացիներին ծանոթացնում շերամապահությանը: Դետագա տարիներին որպես գյուղատնտես աշխատում է Աղյամում, Միջին Ասիայում, Բաքվում, Եվլախում, Գանձակում և այլուր: 1905-06թթ. ազգամիջյան ընդհարումների հետևանքով ավերված տնտեսությունների ճակատագրով խորապես մտահոգված ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին հղած նամակում Կ. Մելիք-Շահնազարյանը խնդրում է Վեհափառին էջմիածնի ճեմարանին կից բացել գյուղատնտեսական դասընթացներ: ¹ 1906թ. Խրիմյան Հայրիկի իրավերով Մելիք-Շահնազարյանը տեղափոխվում է էջմիածնի կալվածքների կառավարչի պաշտոնն է կատա-



Կոնստանդին Մելիք-Շահնազարյան

որում և միաժամանակ գյուղատնտեսական գիտելիքներ է տարածում:

1918թ. սեպտեմբերին կորցնելով ողջ ունեցվածքը Մելիք-Շահնազարյանը հազիվ է կարողանում իր զավակներին փրկել Բաքվի հայտնի ջարդերից: 1919թ. նա հաստատվում է Հայաստանում, աշխատում գյուղատնտեսության բնագավառում՝ նշանակալի ավանդ ներդնելով հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում: Հրատարակել է մոտ չորս տասնյակ գրքեր և գրքույկներ՝ «Ուշեցոյց գործնական գինեգործության» (1885թ.), «Ծխախտը և իր վնասները» (1888թ.), «Գործնական ճեղուարկ արկի տակ պտուղներ չորացնելու» (1929թ.), «Էնչպես պետք է հավաքել դեղաբույսերը» (հեղինակակից Վ. Պ. Կալաշնիկով - 1934թ.) և այլն:

19-րդ դարի 50-60 - ական թվականներից սկսած հայ հասարակական միտքը գործուն հետաքրքրություն է ցուցաբերում ժողովրդի հոգերը և նյութական մշակույթի նկատմամբ, նոր թափ են առնում ժողովրդական բանահյուսության նմուշների ինչպես հայտնաբերման ու գրառման, այնպես էլ հրատարակման և ուսումնասիրման աշխատանքները: Երիտասարդ բանահավաքը - հրատարակի Տիգրան Նավասարդյանը այդ մտահոգությամբ 70-80-ական թվականներին հայկական մամուլում հանդես է գալիս հատուկ կոչ-դիմումով՝ ուղղված հայ հասարակայնությանը:² Տ. Նավասարդյանին արձագանքում են շատերը, այդ թվում նաև Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործի նախանձախնդիր Մակար Բարխուդարյանը,³ որի հորդորով Տմբլաչի Խաչանը, Արցախ պատմազգագրական շրջանում աշխատություն առաջացնելու և բանահյուսության հավաքման գործին նպաստելու նպատակով, ժողովրդական կենդանի բար ու բանով համեմված իր ֆելիետոններով հաճախական է հանդես գալիս ժամանակի հայկական մամուլում: Տիգրան Նավասարդյանի ջանքերով 1882թ. Ծուշիում հրատարակվում է «Ղըլքն կնանոց պընը փեշակը»⁴ գրքույկը՝ գրված դարաբայան հյութեղ և հատու բարբառով, արտահայտչամիջոցների կուտակումներով, ժողովրդական կենսափորձն ու իմաստությունը արտահայտող ասացվածքներով, թևակոր խորքերով: Այստեղ ժաղովում է գավառական քաղցրենիների վարքն ու բարքը, սահմանափակ հետաքրքրությունները, մանրացող և գորշ բնավորությունը: Կ. Մելիք-Շահնազարյանին ճանաչում է թերում 1900-01թթ. Բաքվում լույս տեսած երգիծական ֆելիետոնների «Զուռնա-Տմբլա» երեք գրքից բաղկացած ժողովածուն, որը 1907-08թթ. Կաղարշապատում (այժմ՝ Եջիմածիմ) լուցվում և վերահրատարակվում է երկու գրքով՝ Ա, Բ:⁵ Վերոհիշյալ գրքերում (ֆելիետոնները թեմատիկ առումով բազմազան են՝ ընտանեկան-կենացաղային, սոցիալական-քաղաքական) ակնհայտ է հեղինակի վարպետության համարյա թե բոլոր հատկությունների խտացումը՝ հոգեբանական թափանցում, սատիրիկ ընդվզում, ընդհանրացման ճաշակ, չափի զգացում:

* Կենսագրական տվյալները քանդակած են հեղինակի ծեռագիր ինքնակենսագրությունից: Ե. Զարենցի ամփան գրականության և արվեստի բանագրան (այսուհետև ԳՄԹ). Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, 177:

¹ ԳԱԹ. Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, 107:

² «Մշակ», 1882, N 4, 222, 1883, N 79, 1884, N 10:

³ ԳԱԹ. Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, 116:

⁴ Կ. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան, Ղըլքն կնանոց պընը փեշակը, Ծուշի. 1882թ.:

⁵ Տմբլաչի Խաչան, Զուռնա-Տմբլա, գ. Ա, գ. Բ, Կաղարշապատ, 1907, 1908: Մեջբերումներն ըստ այս հրատարակությունների:

ՄՐԱՉԻ ԽՇԱՄԻ «ԶՈՒՄԱ - ՏՄԲԱ» ԺՈՂՈՎՐԾՈՒՆԵՐԸ ԵՎ ՇՈՒՇԻ ԻՐԱԿՄ - ՀՐԱՊԱՐԱՅԻՆ ԿՅԱԼՔԸ

Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆ (Տմբլաչի Խաչան) 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին տասնամյակների հայ նշակույթի նշանավոր գործիչներից է, հանիրավի մոռացության նատնված մի հեղինակ, որի ստեղծագործությունը կայրակում է նկարագրվող դեպքերի, իրադարձությունների մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով:

Սեծ հետաքրքրությունների տեր մտավորական է եղել Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը: Գիտնական գյուղատնտեսք մամուլի միջոցով մեր օգտակար խորհուրդներ էր տալիս բույսերի խնամքի, հողային աշխատանքների կատարման, ցանքատարածությունների նշակման և, ընդհանրապես, այգիների բարձր բնիքատվության մասին, մեր գոտուրիկ պատմվածքներ ու չափած գործեր էր նվիրում մանուկներին; մեր ժողովրդագիտական բազմանյութ նյութեր էր հրապարակում, մեր արժեքավոր թարգմանություններ ու փոխադրություններ էր անում, մեր էլ սարկազմի ազդեցիկ ուժով ջրի երես էր հանում ժամանակի ու միջավայրի աղտոտությունները, որոնք բնականաբար, խանգարում էին հասարակության առաջընթացին: Ավոնվազն անուրանալի է նրա ստեղծած գրական ժառանգության ճանաչողական արժեքը, որտեղ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը ներկայացնում է 19-րդ դարի 80-90-ական թվականներին Արցախ պատմագագարական շրջանի և մասնավորապես Շուշիի համայնապատկերը՝ որպես արցախահայերի մտավոր և տնտեսական կյանքի կենտրոն:

Տմբլաչի Խաչանը Կ. Կ. ՄԵԼԻՔ - ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆի խոսափող-հերոսն է, որին հեղինակի կամքով վիճակը ված է որպես գեղարվեստական կերպար ընդգել մարդուն ճնշող ամեն տեսակ անարդարությունների դեմ: Իր ստեղծագործությունները երկնելով այդ սկզբունքով՝ Խաչանը անցնում է նմերցողի հետ սրտակից գրուցի, շարադրում է իր խորհրդագիտությունները պատկերվող երևույթների մասին, ընարական շեղումներով սերտ հոգեկան կապ ստեղծում իր և ընթերցողի միջև, կյանքի գաղափարական-հոլովական գնահատականով նպաստում թեմայի բացահայտման ու ամբողջացմանը: Իր լեզուն ենթարկելով կյանքի պատկերավոր վերարտադրության խնդրին, «Չուռնա-Տմբլի» խմբագիր, հրատակիչ Տմբլաչի Խաչանը դառնում է գեղարվեստական կերպար և իր անունից համախմբման ու սրափության կոչ է անում արժանապատիվ դարաբաղդիմներին. «Ել օգը չըմ ըրգննենիմ, ին աչքի լույս ըշխարքավս մին փոված նամուս դեյրաբով դարաբաղցիք, իմ հույսը ձեզ երա ա, ձեր արուու օլմիա քա չոլ քցիք, դուդի բուդի պեներու հետա կենաք ծեր վյաբանը, ծեր կառ ուշաղին երա ջուր ածիք, Դարաբաղին անընը կոտրիք»¹:

Ֆելիքտոններում Խաչանը է կամային ու վճռական հայացքով, կտրուկ ու անմշակ շարժումներով, խատապարզ արտաքելով բացառիկ քնքուշ ու տառապող հոգի, անկաշկան միտք: Իր կյանքն ու գրական-հասարակական գործունեությանը Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը ծառայեցրել է մի բարի նպատակի. մարդկանց օգտակար լինել, բաժանել իր հերոսների տիրությունն ու կոկիծը, կարել լույն չափ սպեղանի լինել նրանց վերքերին և ծիծաղաշարժ ու անբնական իրավիճակներում կանգնեցնել հայրենակիցներին ճիշտ ուղղու վրա: Պատահական չէ, որ այդ նպատակին համար գրական հայրենի, գրաբարի հմուտ գիտակը, ոռուերենին, ֆրանտերենին հիանալի տիրապետող Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը, իր ստեղծագործության համար ընտրեց Ղարաբաղի բարեառը և «Չուռնա-Տմբլաչի» տիտղոսաբերը: Քում երկը ծոնեց հայրենակիցներին. «Իմ աչքի լույս դարաբաղցոց, մեծին ու պուծուրին փեշքեց»:

Հավատարիմ մնալով բարեարիմ՝ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը երեմն հրապուրվում է նաև գրաբարով ռուսերեն, ֆրանտերեն որոշ արտահայտություններով, այդ դեպքում մեծապես տուժում է նրա պատումը: 1889թ. հունվարի 28-ի թվակիր նամակում Լեռն, գնահատության խոսքի հետ մեկտեղ, արժեքավոր դիտու դուրս են անում Խաչան ապօռը. «Սպասիր, էջմիածին ո՞ւ ես գնում. այնտեղ խարաբա է: Շուշու շատ մի հեռանար: Թու աշխարհու այս է, այսուղե միայն տմբլատ եղած կլիմի: Կոներ դվարավ: Էլի թիսու և տեղբլետ. բայց լիիր, տես ինչ եմ ասում: Այն ի՞նչ ֆրանտերեն է, որ դու ես շարում: Թող, ի սեր աստծու այդահայի բաները: Գրիր իբրև Տմբլաչի Խաչան, իբրև անհասկացող, իբրև անզարգացած մարդ և տես այդահայի բաները: Գրիր իբրև Տմբլաչի Խաչան, իբրև անհասկացող, իբրև անզարգացած մարդ և տես այդահայի բաները: Դու կարող ես էլի մասնավոր կերպով պոլիտիկան լինել, բայց պոլիտիկան իբրև Տմբլաչի Խաչան: Իսկ ֆրանտերենի պարերություններով համենած ֆելիքտոնների տակ իրավունք չունես Տմբլաչի Խաչան գրել, պիտի գրես թմբլահար Խաչատուր. Այն ժամանակականալի կլիմի: Դու, իհարկե հասկանում ես ինձ»²:

Այս, ինչպես Լեռն է նկատում, Խաչանի աշխարհը Շուշին է իր հոչակավոր «Թոփիխանա» հրապարա-

կով, որը հայկական թաղի կենտրոնում էր գտնվում: Այն անփոխարինելի հավաքատեղի էր շուշեցիների համար, ուր գրուցելու նպատակով սիրում էին հավաքվել թե երևելիները, թե արհեստավորները, թե ծորեն ու ջահելների նշանավոր գործությունը կայրակում է նկարագրվող դեպքերի, իրադարձությունների մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով:

Սեծ հետաքրքրությունների տեր մտավորական է եղել Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը: Գիտնական գյուղատնտեսք մամուլի միջոցով մեր օգտակար խորհուրդներ էր տալիս բույսերի խնամքի, հողային աշխատանքների կատարման, ցանքատարածությունների նշակման և, ընդհանրապես, այգիների բարձր բնիքատվության մասին, մեր գոտուրիկ պատմվածքներ ու չափած գործեր էր նվիրում մանուկներին; մեր ժողովրդագիտական բազմանյութ նյութեր էր հրապարակում, մեր արժեքավոր թարգմանություններ ու փոխադրություններ էր անում, մեր էլ սարկազմի ազդեցիկ ուժով ջրի երես էր հանում ժամանակի ու միջավայրի աղտոտությունները, որոնք բնականաբար, խանգարում էին հասարակության առաջընթացին: Ավոնվազն անուրանալի է նրա ստեղծած գրական ժառանգության ճանաչողական արժեքը, որտեղ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆը ներկայացնում է 19-րդ դարի 80-90-ական թվականներին Արցախ պատմագագարական շրջանի և մասնավորապես Շուշիի համայնապատկերը՝ որպես արցախահայերի մտավոր և տնտեսական կյանքի կենտրոն:

Տմբլաչի Խաչանը Կ. Կ. ՄԵԼԻՔ - ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆի խոսափող-հերոսն է, որին հեղինակի կամքով վիճակը ված է որպես գեղարվեստական կերպար ընդգել մարդուն ճնշող ամեն տեսակ անարդարությունների դեմ: Իր ստեղծագործությունները երկնելով այդ սկզբունքով՝ Խաչանը անցնում է նմերցողի հետ սրտակից գրուցի, շարադրում է իր խորհրդագիտությունները պատկերվող երևույթների մասին, ընարական շեղումներով սերտ հոգեկան կապ ստեղծում իր և ընթերցողի միջև, կյանքի գաղափարական-հոլովական գնահատականով նպաստում թեմայի բացահայտման ու ամբողջացմանը: Իր լեզուն ենթարկելով կյանքի պատկերավոր վերարտադրության խնդրին, «Չուռնա-Տմբլի» խմբագիր, հրատակիչ Տմբլաչի Խաչանը դառնում է գեղարվեստական կերպար և իր անունից համախմբման ու սրափության կոչ է անում արժանապատիվ դարաբաղդիմներին. «Ել օգը չըմ ըրգննենիմ, ին աչքի լույս ըշխարքավս մին փոված նամուս դեյրաբով դարաբաղցիք, իմ հույսը ձեզ երա ա, ձեր արուու օլմիա քա չոլ քցիք, դուդի բուդի պեներու հետա կենաք ծեր վյաբանը, ծեր կառ ուշաղին երա ջուր ածիք, Դարաբաղին անընը կոտրիք»³:

«Թոփիխանայում» հավաքված վաճառականներին, իհարկե, իրենց ընթացիկ գործերն են հետաքրքրում, անգործ մարդիկ այստեղ հերթական օրն են անցկացնում, տարիքավորները տրվում են անցյալի հուշերին, չափահասները եկեղեցու բակում տեսած օրիորդներին են քննադատում, իսկ մշակները վխտում են բոլոր նորանց գործը նորանց մարդկան է ենթարկվում «Թոփիխանայի» շրջանակներում, սակայն չպետք է մոռանալ, որ այստեղ հարգվում է դիպուկ խոսքը, հումորը, երգիծանքը և հաջող սրախոսությունն արդեն իսկ պատռում է նեղ բոնրատնային մտածողության սահմաններն ու տեղական շրջանակները, բերներեան շրջում Արցախում: «Թոփիխանան» ծգում է շուշեցիներին, որովհետև նրանք այստեղ անձնատուր են լինում զվարժախտության: Չենց «Թոփիխանայից» էլ ծայր է առնում մեկընդիշտ հաստատագրված բնագույն չճանաչող ժողովական բանահյուսությունը: Հղամարդիկ «Թոփիխանայում» էին միմյանց հետ տեսմավում, գրուցում, կատակում, մինչդեռ կանայք տակավին անմասն ին հասարակական կյանքից և միայն հարգելի առիթներով կուտրու է եղանք և անցկացնում է անընդհատ շաղակրատում էին մանր-մունը հարցերի շուրջը, վերլուծում գավառական քաղաքի անցուղարձը, բամբասում և հարսնացու ընտրում իրենց որդիների համար: Պարզվում է, որ «Ոլորցե» կանայք բավական դժվարահամ են հարսնացու ընտրելու համար: Չենց անգուստում է կարգությունը: Ամենաարժանի բեկնածուն անգամ հայտնվում է ծախու ծիու վիճակում: Բազմակողման բնարկությունը է հարժանացուի մոր անցյալն ու ներկան: Պակաս կարևոր չէ մոր՝ «ճյուրը կակուր» լինելու հանգամանքը, չէ որ պտուի ծաղու հեռու չի ընկնում: Ծանրութերեւ է արկում հարսնացուի հարազատների հաստատության մեծ գրաված դիրքը, ունեցվածքը բեկնածուի արտաքինն ու օժիտությունը:

</

Իսկ թատերասերները երբեմն նարկայացումներ էին կազմակերպում, ուր միայն տղամարդիկ կարող էին հաճախել: Ըստ Պետրոս Զաքարյանի, «Շուշի», հուշապատման՝ «1860-ական թվականների վերջերին քառարոնի հասարակության կողմից անարգանքի ենթարկվեց ներկայացման հանդիսատես տ. Զավահիրը, թ. Ա-ի կինը, այն բանի համար, որ թատրոն էր եկել: Պարզ լսելով իր հասցեին ուղղված միանգամայն անվայել ածականները, տ. Զավահիրը, համբերությունից դուրս եկած, դառնում է իր շուրջ եղածներին և ասում. «Դժմարներ, վաղը, մյուս օրը այստեղ տեսնելու եք ձեր կանանց, աղջկներին: Ինչո՞ւ եք անվայել խոսքեր ուղղում իմ հասցեին»: Եվ ճիշտ որ, 1880-ական թվականների սկզբին ավելի համարձակ օրինորդյությունը հարցական նշանի տակ էր մնում: Այդպիսիները, իբրև պատիժ, երկար սպասում էին փեսացուների⁷: Իսկ 1881թ., երբ Պ. Աղամյանը Շուշի եկավ հյուրախաղերի, թատրոնն արդեն լի էր կանանց հասարակությամբ...»

Անավասիկ, Մարյան բացի «Օթելլոյի» մեկնությունը պարզվում է, որ ներկայացման ընթացքում Մարյան բաջին գլխապատճառ փախուստի է դիմել, որպեսզի ոստիկանությունը հանկարծ իրեն չկանչի վկայություն տալու բենում տեղի ունեցած մարդասպանության կապակցությամբ:

«-Մարյան բաց, ասըմ ըն երեկ տու էլ ըս թեցալ թյատր, Օթելլան տըսնալի, ղո՞ր ա:

-Վեչ պիտի թեցած, արուսու վեր եկավ, բա քանդի ծեր թյատրն էլ, կլուբն էլ, ցիրկն էլ, ախճի մին սյուրու հայասըզեր նի ըն մննըմ ութընեն տյուս կյամ, տղըմարքոց նետ ենքան խալսին օրաշին սիլիքիլ անըմ, պոռշտի անըմ, չոքըմ, պցրանըմ, կլվկոլ անըմ - «տու ինձ կսիրիս»: «Յա, կսիրիմ, խե չըմ սիրել»: Սիրողն էլ հո՞ւա, մին կիշը կիող արաբստանցի, բա տու իմ ցավս քաղիս, տու իր մնացալ ըրամակ ընգնիս: Այսրը վերջը սերը երկուսին կլոխն էլ կերավ, արաբստանցին գիղըմ չեմ հնչու միար խանչալը կոխեց սիրեկանին սիրտը, սյարի էկավ, ուրան վիզն էլ տնակավ դիշ-դիշ ըրավ կտրից, եզնու մչանք ջյամդաքը տափին եկավ, խոխոցրավ:

-Ետնա՞ն:

-Ետնան էլ իի՞նչ, պոլիցան եկավ, վեր պրատակու շինի, մուտք անսես տյուս եկինք, վեր մեզ շիադ (վկա) չկրին, տոն եկինք. չորու միեց էլ վեր էտ գյուրբագյուր մետս ա ընգնըմ, սիրտս թմփրմիս ա:

-Մարյան բաց, վիշեցած կինիս է~:

Բա իինչ ա, արաբստանցուն աչքը տյուս տրաքի, գիղալ պիտի հշտեղ ըն գյուրբագյուր ընելու, քինի կիրեզմանին երա վննընեռքիս ճյուր քցի»⁸:

Իսկ «Յայոց թիատրան» ֆելիտոնում իր սանամերից իմանալով, որ բեմի վրա մահանալուց հետո, Սիրանույշը հաջորդ օրը հայտնվել է հայոց «Վեչերում», Շուշին ականջներին չի հավատում և երկար գլուխ կոտրելուց հետո հասկանում է, որ նա բեմում իիվանդ է ձևացել, նոյնիսկ մահացել և բարեգործների հանգանակությունը յուրացնելուց հետո փախել: Սիրանույշի մտքին ուրիշ բան կար, ահա թե ինչու է «աֆիշ-կաներում» տպած իր անունը բեմի վրա փոխել, որ հենց ժողովուրդը թատրոնից հեռանա, «փողերը տիճի ջուրըմ, փայտոն նստի, մին պուքի...»⁹:

Տմբլաչի խաչանը պատկերում է Շուշիի իրական կյանքը բացահայտող բազում հնարանքներ, միևնույն երևույթը ամենատարբեր տեսանկյունով մեկնաբանող դիտակետեր: Մի կողմից պարսպավանքի են արժանի տգետ տղամարդիկ, որ անպատճում են կնոջը թատրոն գնալու համար, մյուս կողմից ծայրաստիճան զավեշտական է ներկայացնում դիտող կնոջ վիճակը, որը տեսածից ոչինչ չի հասկանում:

Խաչանը ունի մականուն Տմբլաչի, որը նախ նրա զբաղմունքն է մատնանշում և ապա՝ բանահյուսական եւրոյւնը: Ժամանակին «Տմբլաչի խաչան» մակորին արդեն իսկ խոսում էր երգիծելու բացառիկ շնորհը օտվածության մասին:

Խաչանը սիրված անուն էր, և երկրպագուները սիրով ու անհամբերությամբ էին սպասում նրա ֆելիտոններին: Այդ են վկայում իին շուշեցների ու երևանցների հուշերը, բազում նյուրեր ու նամակներ: Այս տեսանկյունից հետաքրքրական է 1893թ. գրված «Մի խումբ երևանցների» նամակը. «Ազնիվ բարեկամ, բազմաթիվ ընթերցողներ, ուսանողներ և ամեն դասակարգի արք և կանայք անհամբեր սպասում են Տմբլաչի խաչանի նյունայից գրած ֆելիտոնների շարունակության, ուր ինչպես որ խոստացել էր յուր գրչին հատուկ ծշմարտացիությամբ պետք է նկարագրե սանդարամետական դժոխքը և նրա մշտաբնակ բնակչիների նիստն ու կացը և մեզ ծանոթ երեսուների իսկական պատկերները: Խնդրում ենք Ձեզ, որ Ձեր և մեր անզուգական սիրելի բարեկամ խաչանին մեր ամենիս անկերծ բարևներն հայտներ և ասեք, որ դժոխքից գրված նկարագրությանց անհամբեր օրեցօր սպասում ենք...»¹⁰:

Պակաս ուշագրավ չէ Գր. Տեր-Յովհաննիսյանի (Սուլրացան) 1893թ. հոկտեմբերի 18-ի թվակիր նամակը, որտեղ Մուլրացանը իրեն համարելով Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի բախտով, վիճակով և առողջությամբ հետաքրքրովողներից մեկը (Նրանց մտերությունը ծայր էր առել դեռևս Շուշի թեմական դպրոցից), նախ անհամբատանում էր վերջինին մասին տեղեկություն չունենալու համար և ապա՝ «Նոր-Դարի» տասնամյակը տոնելու և թերթը նյութական կողմից մի փոքր ապահովելու նպատակով խնդրում է Կ. Մելիք-Շահնազար-

յանին ֆելիտոններով, մասնագիտական արժեքավոր հոդվածներով հաճախակի հանդես գալ թերթի էջերում, իսկ վերջում բարեկամարար կշտամբում է իր ֆելիտոններին «սպասողներին սկի բանի տեղ չդնելու համար»¹¹:

Բարեկամական կշտամբանքը շարունակվում է Վահան Վարդապետի 1906թ. սեպտեմբերի 28-ին գրած նամակում. «Յա, խոեգ ար մնացալ, թա մըննաս ընկնե, է ոչ տմբլետ սասնա եր ինում, ոչ է զուռնետ, էտ հունց պեն ա. Բալքի լրիա իրլը վերալըս, էլ ոչ ծեռքումդ ա զոր մնացալ, ոչ է բերանմուտ նափաս: Ես էտ երկու ջալմաս գրեցի հանցու հզեն պեց ամիմ. թա կարիս մի քանե ջալմա է դու կիրի... Մըհե, խաչան ապեր, օղորմի հորդ, հանց ըրա, որ մեր հոդեն անումը խցյտառակ չի տեղոնա, մին հանց հունար նշանց տո, որ լոյսին բերանը բաց մնա»¹²:

Իսկ «Աղբյուրի» և «Տարագի» խմբագիր-իրատարակիչ Տ. Նազարյանը 1913թ. գրած նամակը սկսում է հարցումով. «Էտ իի՞նչ, էլ սասուսուս չըս անըմ, թա իինչ բանի ը՞ս». Շետո ոգևորում է խաչանին, որ ալբոն է իրատարակելու, «մին ալբոն-իինչ ալբոն, մին ալբոն-ալմանախ, վեր մեչին լոխ դարաբաղի ու Ղարաբաղ իինի» և ապա հորդորում է Տմբլաչի խաչանին. «Մըհեկ քեզ զոյաչանք-ազդատանքս էնա, որ էտ թարիան Ղուկասնց գործերը հիմա ետ բողիս հու դալամը ծեռքը յոր օնիս, մինչև 20 օր ինձ հասցնիս մի հիասքանչ, քեզ հատուկ համով-հոտով ֆելիտոն»¹³:

Խաչանը գուսան է, զուռնաչի, տմբլաչի, մունետիկ, ազդարար: Ուրեմն, զուռնան և տմբլան խաչանի ստեղծագործության պատկերավորման իմանական միջոցներն են: Այդ գործիքները, որոնցով հայտարարվել է ուամակոյ և ազդարարվել հաղթանակ, խաչանի երևակայության մեջ եղելության, լրատվության տարածման են ծառայում: Յայտնի է, որ Ղարաբաղի գյուլերում եղել են շատ գուսաններ (աշուտներ), որոնք «Եղբայրների» պեց էնա բարոյապես և նյութապես սատար էտ լինում միմյանց, որոշակի պարտականություններով համախմբվում էնա կարիքավորների (այրոների, որերի) շուրջը, համընդիանության ոտանակորներ էնա հորինում ու երգում: Տոն օրերին, երկար ու ծիգ երեկոներին և գիշերները, առավելապես դաշտային աշխատանքներից հետո, գուսանները ունկնդիմերի համար հասկանալի ընդիհանուր գործածական բառերով, գերազանցապես իրենց ստեղծագործություններից հորինված իրապարակային ելույթներ էնա ունենում: Ընդունված էր նաև գուսանների մրցությունը, հանպատրաստից ստեղծագործելու երգելու և նվագելու վարպետության ու շնորհիք ցուցադրումը»¹⁴:

Տմբլաչի խաչանը ևս արածնորդպում է հասկանալիության սկզբունքով: Նա իր մտքերը արտահայտում է բարբառով, հասարակության լայն խավերին մատչելի պատկերավորման միջոցներով, շարադրանքի որոշակի ձևերով:

«Չուռնա-թմբլա-թմբուկը իրավի կատարյալ ժողովրդական նվագախումբ է հարսանիքներում, խնայութերում, ժողովրդական զվարճություններին, սրբավայրում, ամենուր տարածվում են նրա հնյուններու:

Բայց զուռնայի մեղեդիներն ու թմբլայի երկու փայտիկների հարվածների ութմը մինչև օրս քիչ են ու սումնասիրված և չի պարզված, մի կողմից, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում Յայաստանի տարբեր շրջանների զուռնայի մեղեդիների և, մյուս կողմից, Յայաստանի զուռնա-թմբլայի և հարևան երկուների համանան գործիքների ու մեղեդիների փոխարարաբերությունը»¹⁵:

Թերևս, մեզ այս դիտարկման մասն է հետաքրքրում, որովհետև զուռնա և տմբլա գործիքներով կենցաղավորված համակարգը պահպանում է վերոիիշյալ նվագարանների ավանդական կարգավիճակը և հնարավորություն է ընձեռում զուռնայի և տմբլայի ընտրությունը բացատրել ոչ թե Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի նախասիրությամբ կամ պատկանական շարժառիթներով, այլ մեր ժողովրդի երաժշտակա

Տեղեկություններ կան, որ զուռնան լայնորեն տարածված է Եղել Շայաստանում արաբական տիրապետության սկզբնական շրջանում (7-8դդ.), որ զուռնաշին արհեստավարժ մասնագետ-կատարող է Եղել արևելյան փողային նվազախմբում: Զուռնայի նվազը ցայսօր չափազանց ընդունված է անդրկովկասայան ժողովուրդների միջավայրում, իսկ տոմբլայի (դիոլ) կաշեփոլիկի հանգույցներից զանգուլակներ կախելու սովորությունը այս նվազարանի նկատմամբ համաժողովրդական սիրո ու խանդաղատանքի արտահայտությունն է: «Գործիքը վայելչագեղ է այն աստիճան, որ փոքրապատկեր վիճակում հաճախ ծառայում է որպես բնակարանի զարդ»¹⁸:

Անցյալում զուրնան հաստատուն տեղ է ունեցել առօրյա կյանքում ու կենցաղում: Այսպես, օրինակ աղունը ջրաղաց են տարել, հարսանեկան խրախճանքի ապուրը մաղել են կամ էլ բարեկենդանի խաղեր են կազմակերպել ու զանգվածաբար գյուղից գյուղ են շրջել զուրնայի նվազակցությամբ: Այդ ամբողջ աշխատանքուն գործընթացների, տոների, ծիսակատարությունների ժամանակ զուրնան մշտապես մասնակի է եղել:

Ապերեք է Տմբլաչի Խաչանի տնբլայի (թմբուկ) թատերական-հրապարակային դրսերումների աղերսները միջնադարյան հայկական աշխարհիկ թատրոնի հետ. «Շահեկան են Կիլիկյան հայկական աշխարհիկ թատրոնին վերաբերող այն տվյալները, որոնք պարզում են գուսանների և վարձականների ժողովրդական հանդեսների գեղարվեստական բնույթը (որպես ցուցք), ճշում նրանց երկացանկը՝ բաղկացած առասպելներից, առակներից, ասքերից ու վիպա-դրամատիկական գործերից, նաև հստակում են կատակներու ու խեղատակների ներկայացումների նկարագիրը, որոնց հիմքը կազմել են երգիծական խոսքն ու կարպատման վածքը, զվարճապատումն ու կրկնասային զավեշտախանդը»¹⁹:

«Թոփիսանա» հրապարակում Խաչանի խոսքը նույնպես ուղեկցվում է հնարախոսություններով, զվարճապատումներով, յուրօդինակ երգ ու նվագով, կրկեսային զավեշտախաղ հիշեցնող «նազե կամքջի» հաղթահարումով, քանզի ի սկզբանե ժողովրդական նվագարաններն են Խաչանի մտածելակերպի ու հովանուի դրսևորման առարկայական միջոցները, և ժողովրդական առողջ կենսագացողությունն է սնուցիչ հողի հանդիսացել «Զուռնա-Տմբլայի» ֆելիետոնների համար: Տմբլաչի Խաչանը վայելում էր Արցախ պատմազգագրական շրջանի աշխատավոր ժողովրդի սերն ու համակրանքը, որովհետև քաջատեղյակ էր 1919 որ դարի վերջին քառորդի Շուշիի հրական-հրապարակային կյանքին, ժողովրդի նիստ ու կացին, ապրումներին, ազգային տենչերին ու իդերին: Չամրահայտ է, որ զուռնան ու տմբլան արցախահայերի հարսանեկան համակարգի հիմնական նվագարաններն են: Զուռնայի «սահարի» ծանոթ մեղեդին, որ հնչում արևածագին, խորհրդանշում է արևի պաշտամունքը և արդեն իսկ հրավեր է հարսանքավորների համար Դարսանյաց հանդեսը ավանդաբար ենթադրվում է երգով-պարով-երաժշտությամբ, տարարժեք նվերներով, խնջույքներով, զանազան զվարժալիքներով պայմանավորված մի համակարգ, որն ի կատար ածելող դժվարին ու շնորհակալ-գործը ծանրանում է ժողովրդական երաժշտների՝ զուռնաչու և տմբլաչու ուսերին: Ուրեմն հարսանահանդեսը ինքնին թելադրում է իր պահանջները զուռնա և տմբլա նվագարանների տիրապետող երաժշտներին, իսկ վերջիններս պարտավորված են զգում այդ լսարանի առջև: Զուռնա հոլի ձայնը լսելուն պես, բոլորը հավաքվում էին: Չնում հարսանիքին «հյուր» էին գնում գեղովի: Չամրեալով որպես տմբլաչի Խաչանը ևս անմիջապես լսարանի կենտրոնում է հայտնվում: Լսարանը, որոշակա ակնլայլիքներով, իր պահանջներն է թելադրում Խաչանին: Վերջինս մերը իհասրափում է, մերը ոգևորվում, մերը խեղճանում, մերը ըմբոստանում, նրա ասելիքը կարծես ուղեկցվում է նվագով և համապատասխանաբար ութմային փոփոխություններ է կրում: Չարսի օժիտը ցուցադրաբար համընդիանությունը ուշադրությանը արժանացնելու պատիվը տմբլաչուն է պատկանում: Իսկ տանտիրոջ և նվագողների օգտին նվեր ների և դրամի հանգանակությունը հանձն է առնում զուռնաչին՝ որպես հարսանահանդեսի «ամենալեզզված և ամենենու նառոյ»²⁰:

Թե տմբլազու և զուռնաչու կողմից հարսնահանդեսը կազմակերպելու այս ավանդական դրի մեջացվում է զուռնա և տմբլա գործիքների միջոցով դրությունը վերահսկելու, իրավիճակը ներկայացնելու տերեւատությունու ու սովորությունու մասին:

Ժողովրդական նվազողների պես, Խաչանը և հնարամիտ է: Որոշ ֆելիետոններում անգամ զուհսաչ պես պնդերես է ու խորաճանկ: Սակայն նրա սրամտությունը բամբառակության չի վերածվում, և նրան երեք չի լրում ողջախոհությունը: Երբեմն առ երբեմն Խաչանը կորցնում է զսպվածությունը, որովհետև ոքան մեծ է ծշմարտության ձայնը խլացնելու ձգտումը, այնքան մեծ է Խաչանի ընդվզումը: Թե հանդիս Վորո-Ռուսիս պահերին և թե տրտմության զունան արտահայտել է մարդու առավելագույն հուզական վճակը:

1908թ. նոյեմբերի 30-ի թվակիր նաճակում Վահան Վարդապետը բարենադրանքներ և խորհուրդներ է հղում Խաչանին. «Աստված քեզ սահսալամաթ պահե. Սավ կաց, պենդ կաց. Զուռնատ ու Տմբլատ ձեռքատ տաս վուչ, հազեր պահե, հանցու որ վախտը կյա, դըռօցնիս, աշխարքը սարսամիշ անիս, քունա երկրցնիս: Ըսկացե՞»:²¹

Նկատենք, որ խաչանի ուսերին ծանր բեր է դրված՝ «աշխարքը քնից վեր կացնելու» առաքելություն։ Չուրնայի երրորդ համարի «Աշխարհական (յանի թա ղլմզալու պեներից)» տեղեկանում ենք, որ մի խումբ կանայք ու տղամարդիկ խիստ զայրացած են և եթե գուրնան ձեռքներն ընկնի, «հիվատաս ուեխը արժիճռվ լցնել տան, վեր սյասը հանց կտրի, հրւոց վեր միայն Տերն ա կտրոցնը»²²։ Բայց «Չուրնա-Տմբլա» գործիքներն անձնավորված են այն աստիճան, որ երբ իրենց կատարած գործերը աշխարհով մեկ սփռելու համար «ղղլըցեք» պատրաստվում են քարկոծել խաչանին, վերջինս հնարամնորեն պատճառաբանում է, որ Տմբլան տիրոջ կամքից անկախ է հանդես գալիս, որպես անաչառ տեղեկատվության միջոց։ «Մին էլ ախր ինձանըն իի՞նչ մեղ կա, ա ծեզ մատաղ, սաղ էն էշու կաշվա շինած ու Սավ ղայիմ կրկատած Տմբլան ա խաբար տամ. հու վեր նոյնըն ա, թող ընդրանա նոյանա»²³։ Իբրև լրատվության միջոց ուշագրավ է «ղրամաֆոնի» խորհրդանշը. «Բոլա՛, բոլա՛, ղրամաֆոնս ծածկիմ, թա չէ ուեխը եկածը տյուս կտա, խալխին ըռաչին բիաբուր կտեռնանք... Յը-... »²⁴.

«Զուրնա - Տմբլա» N 11-ը հայտնում է, որ զուրնայի երբեմնի ախորժալուր ձայնի փոխարեն խոչխողն է լսվում, վերջինս նույնպես ֆինանսական ճգնաժամի մեջ է հայտնվել, «Տական-կլիսան» ֆելիետոնը վկայում է, որ եղանակը ցրտելու պատճառով Տմբլան վատառողջ է, «կաշին տմկալա, սյասը Սավ չի եր ինըմ»²⁵:

Որպես շնչավորման ու անձնավորման փոխաբերական միջոց՝ Զուռնա-Տմբլան գեղարվեստական պատկերավորման հետաքրքիր օրինակ է: Այսպես՝ «Տնգլբաժին թլդրամնեն» հայտնում են, որ իրանում պատրաստվում են բուրգարով ու սաղմոսով դիմավորել Զուռնա - Տմբլայի²⁶:

Որ Զուրնա-Տմբլան անհատականություն է, համոզվում ենք կարդալով վերջինիս «արձավելեննին» (հայտարարություն) իր տասնամյա հոբեյանը տոնելու և ընթերցողներին քեֆի հրավիրելու մասին²⁷:

Ինչպես տեսնում ենք Զուրնա-Տմբլան հանդես է գալիս անձի առնան ոլորտում։ Նա ոչ միայն ուրախանում է, տիսրում, տկարանում, կազդուրպվում, մտահոգվում, նեղանում, նեղացնում, արդարանում, խորիում, այլև սգում է։ Մի ամբողջ տարի խաչանը հրաժարվում է հարսանիքներում նվազելուց, «Զուրնա-Տմբլիս իրեսը սև քաշած», որովհետև «Միեց քեզ զմ իրցնըն, խաչանը իինչ վայ տա կլիխն, իինչ սրտավ Զուրնին փշի յա Տմբլին թխի, քանի վեր հայու օջաղը, ես ղադիմի շղթաթախ օջաղը օրն օրին երա մուտտառվընա, Ասծու օրինությունը, խեր բարաքյաթը մեչան եր կենըն, քանդվըն, պիհչակ տեռնըն, քշըրմոկնը ու բայդուշնեն մեշին այուն տինոր...»²⁸։

Զուռնա-Տմբլան եզակի միասնություն է, գաղափարագեղագիտական խորացում, որի մեջնարանությունը ներկա լվացում են մտքի և երևակայության գուգորդմանը: Զուռնա-Տմբլան գիտե իր գինը, կատարած գործիքարևորությունը: Իր արժանիքները թերագնահատողներին, Ժամա օգտապաշտներին Զուռնա-Տմբլան մերկացնում է «Սարփադարություննե» խսկապես զավեշտական ֆելիթունուն: Ով ուզում է առանց Զուռնա-Տմբլայի, առանց ավելորդ ծախսերի ուրախանա, պարի «բզարան մին Վշխարու յա տվարու փափաջ առնի, քցի կրակին, լիս Վեր տզտղող քի: Եռ կենա ապօ կյա: Ասոր ու լիս զոկերը իտի ըն քեֆ անելը»²⁹:

Ֆելիքսոնների գիրքը Տմբլաշի Խաչանը հենց այդպես էլ կոչում է «Զուռնա-Տմբլա»: Զուռնա-Տմբլան առանձին կերպարներ չեն: Վերոիիշյալ նվազարանների անունները հեղինակը մեծատարերով է գրում և շաղկապով չեն, որ միացնում է իրար, այլ գժիկով՝ իր ողջ ստեղծագործական կյանքում հավատարիմ մնալով այդ միասնությանը:

Թեև մասնագիտական գրականության մեջ զուռնան և տմբլան միանգամայն ինքնուրույն ժողովրդական նվազագարաններ են (նրանց ընդհանրությունը կայանում է համույթային (անսամբլային) բնութի մեջ, սակայն Տմբլաչի խաչանի ստեղծագործության մեջ Զուռնա-Տմբլան մի միասնական հնարանք է, որը հրապարակային, տոնահանդեսային բնափորություն է հաղորդում խաչանի գոշին. «Զուռնիս փշըմ ըմ, Տմբլիս թխըմ սադ ըշ խառին իմրենոք, Վեր...»³⁰:

«Զուռնա-Տմբլան» հրովարտակ է ընդդեմ դասային արտօնությունների, ի պաշտպանություն խեղճերի, անհրավության գոհերի: «Զուռնա-Տմբլայի» սուրբ ծչացող ձայնով երգիծաբանը անխստիր մտրակում է շուշեցի քաղքենուիկին ու օրինազանցներին, իշխանավորներին ու կեղեքիչներին՝ որպես ազգի ընդհանրության շահերի դավաճանների, ի դիմաց գործած բազում անհրավությունների:

²¹ ԱՐ ԿԿ ՄԵԽԵ-ՀԱԽԵՎԱՊՈՒՅՆԻ ՖՈՆԻ. 169:

²² Տիգրանի կուսանմ. նշվ. աշխ... գ. Ա, էջ 176:

²³ Տարբաշի Խաչատր, Աշկ. աշխ., գ. Բ, էջ 113:

²⁴ Առաջի տաշաս, մշկ. ա

Հայոց Առաքելական Եկեղեց

²⁶ Տնրամի կայսեր, ՕՀԿ. աշխ., գ. Ա, էջ 145-146:

27 Արքայի տաշա, ՀՀ:

28 Առաջին մեղում, էջ 138:

29 Տիրապէսի Խաչան, նշվ. ա

30 Տերուաչի Խաչան, Աշվ. աշխ., գ. Բ, էջ 94:

Georgian National Library, Tbilisi, Georgia

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ,
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

Բաց հայտնի է հայրությանդ, թե ինչ հետամնաց վիճակի մեջ է մեր երկրի գյուղատնտեսության վիճակը, ինչպես մեր գյուղական ժողովուրդը ապրուստի նեղությունից հուսահատ թողնում է իր արորն ու գութանք, հոտն ու նախիրը, այգին ու պարտեզը, մեղուները և դիմում պանդխտության իր կեցության միջոցները որոնելու և այդ պանդխտության մեջ նա կորցնում է իր ունեցած ամորն ու պատկառանքը, հայրենի օջախի ավանդությունները և հաճախ ձեռնունայն, ֆիզիկապես և բարոյապես փշացած՝ հայրենիք վերադարձնում, բոլորովին խորթացած մայր հողից:

Այս դրույթունը ահա քանի տարի է, որ շարունակվում է, հայի օջախը քայլավում, երբեմնի լի գյուղական շտենարանները, կարասներն ու կծուները դատարկվում, հայի արյուն-քրտինքով մշակված հողերն ու այգիները հետզհետեւ չքափու տառի ձեռքից ընկնում:

Քանի որ այժմ Վեհափառության անխոն ջանքով մեր դպրոցների ու կալվածների խնդիրը պարզված կէ, Հայկական Եկեղեցին իր իրավանց տեր ու հայ ժողովուրդը անցյալի դառն փորձով խրատված, այժմ նոր տեղանդով հույս կա, որ ծեռնամուխ կլինի մի շարք ազգաշահ գործերի ու բարեփոխությունների: Ցանկալի տէ, որ արժանի ուշադրություն դարձվի և մեր վանական կալվածների վրա առանձնապես և գյուղատնտեսական ճյուղերի զարգացման վրա մասնավորապես: Եջմիածինը՝ իբրև Հայության սիրո, իբրև Հայոց լուսավորության կենտրոն, նախաձեռնող պիտի հանդիսանա և առայժմ եթե անկարող է առանձին գյուղատնտեսության դասընթաց բանալու, գոնե ոյուրություն պիտի տա ճեմարանի սաներին, գյուղական օտարուցիչներին ու Եջմիածին հաճախող ուխտավորներին՝ գործնականապես ծանոթանալու գյուղատնտեսության այննուն ճյուղերի հետ, որոնք առաջնակարգ տեղ են բռնում մեր Կովկասում և մեր գյուղական տարրի ապագան ապահովելու միակ փորկարար միջոցն է կազմում:

Նվաստին կարծիքով, Եջմիածինը իր ճեռքի տակ ունենալով խաղողի այգիներ, հացարույսերի, բամբա-թի ու ձիթատու բույսերի վարելահողեր, տավար ու թթենիներ, առանց մեծ ծախոց կարող է բարեկարգ վի-կակի մեջ դնել այդ ամեն ճյուղերը, մի կողմից վանքի պետքերին գոհացում տալով, մյուս կողմից գիտության ու փորձերի վրա հիմնված մի ազարակ՝ իրու վարժոց ծառայեցնելով ճենարանի սանաց, գյուղական ու լուսուցիչներին ու հետաքրքրվող հասարակության:

Т. Л. Айрапетян – “Зурна – Тмбла” Тмблачи Хачана и реально-публичная жизнь Шуши – К. Мелик-Шахназарян (Тмблачи Хачан – 1857-1940), является одним из видных деятелей армянской культуры конца 19-го века и первых десятилетий 20 века.

Сатирические произведения К. Мелик-Шахназаряна отражают особенности историко-этнографической обласи

Его патриотическое мышление о сохранении национальной самобытности и по сей день имеет актуальное значение.

**ԱԿԱՐԿԱՐ ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ
«ԱԱԼԵԼԻ ԶԱԴԳԱՏՈՒՆ»
ՊՈԵՄԻ ՊԱՏՄԱԿԱ ԱԿՈՒՔԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀԱՍՏԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սևակը Կոմիտասի կերպարին անդրադարձել է դեռ «Անլրելի զանգակատունը» տպագրելուց առաջ: Եթե է բանաստեղծություններ, որը տպագրվել է մամուլում¹, և համարվել է հատված «Անլրելի զանգակատուն» պոեմից: Բայց պոեմի հրատարակման ժամանակ այդ հատվածը հանել է թողնելով այն որպես անախ բանաստեղծություն: Այնուհետև նա հանդիս է եկել արանձին հոդվածով՝ «Դիմանկարի ամբողջացան համար» վերնագրով, որը նույնպես տպագրվել է մամուլում մեծ երգահանի ծննդյան 100-ամյակի օրերին²: Այս ինչու մի հարցագրույցի ժամանակ նա ասել է. «... Իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ Զանգակատունը». գրել եմ զանգան ձևերով» իրու վեպ, իրու վիպակ, իրու ուսումնասիրություն, իրու ոդվածների շարք, իբրև ողբերգություն կամ դրամա. ես գիտեի, որ դա մի օր պիտի գրվի³: Եվ որովհետև որպել էր «մտքի մեջ», Սևակն ստեղծեց այն շատ կարծ ժամանակում, «զարմանալի հիշողությամբ ու ապօպությամբ»:

«ԱԱՆՔԵԼԻ զանգակատում» տպագրվելուց հետո գրական մթնոլորտն ամբողջովին շնչում է Սևակով: Գրան նոր սերունդը շատ հրապուրվեց նրա գրելանով: Փորձեցին նմանվել նրան, ինչպես ժամանակին շա- երն են ուզեցել նմանվել Թումանյանին: Մի տեսակ հեշտ էր բնույթի նմանվել նաև Թումանյանին: Բայց չս- ացվեց: Չստացվեց, որովհետև հեշտ չէ մեծերին նմանվելը: Դա այն ոճն է, որ տրվում է նրան, ով դառնում է յու ոճի ստեղծողը: Սևակի գրական ոճը անկրկնելի մնաց: Նրա գրելաձևի մեջ, ասածի մեջ, ներքին մագմի- ատիպ մի գորավոր ուժ կա, մի անորսալի հմայք, որ տողը կապում է տողին, բարը՝ բարին, միտքը՝ մտքին, ատվածքը՝ հատվածին, ամբողջացնելով ընդհանուր միտքը՝ ասելիքը առանձին հատվածի, և ապա՝ ամբողջ ունի: Դա «Մատյան ողբերգության» պոեմի շունչն է, որ հատուկ է միայն Սևակի պոետական շնչառությա- նը, միայն Սևակի: Սևակը դարձավ մեր մեծագույն ավանդախախտը հայ քնարերգության մեջ, նա եղավ այն ներևույթ մտրակը, որով մի տեսակ սրափեցրեց իր ժամանակակիցներին:

«Նոր էի Վերջացրել իմ «Մարդը ափի մեջ» ժողովածուն և հարյուրավոր ծխախտներ ծխելուց հետո լուս էի Եկեղ սարնամանիքի մեջ մի բաժակ գարեջուր խմելու: Եվ աղմկոտ, կեղտոտ, ցուրտ, ծխաշատ արեջրատանը, հեռավոր Մոսկվայում, հանկարծ ռադիոյից հնչեց կոմիտասյան երգը: Ինձ համար ամեն այս պարզվեց մի վայրկյանում, պարզվեց նաև Վերնագիրը՝ «Կոմիտասյան համանվագ», հետո՝ «Հայոց զարան», հետո «Զարնամահ գանգավասրուն» հետո՝ «Ամրենի գանգակատուն»⁵:»

Կոմիտասի կյանքի նկարագրությամբ Սևակը տվել է արևմտյան մտավորականության ցանկալի ողբեր-
թյունը 1915 թվականին և հայկական զանգվածային ջարդերի տխուր պատկերներ, ու այնպիսի նկա-
նն ունալականությամբ, ասես ներկա է եղել այդ գդայացունց տեսարաններին։
Վերնագրի ընտրությունից հետո նա պոեմի ընթացքի համար ոչ թե առանձին գլուխներ է նշել՝ արարա-
ս կամ հոռոմեական թվանշաններով՝ մեր ավանդապահ հեղինակների պես, այլ գտել է խոսուն վերնագ-
ր այդ գլուխների համար, որ դառնում է տվյալ գլխի քամփածքը, ուղեցույցը, որով թիւ թե շատ գիտակ-
թերոցողը պատկերացնելու է պոեմի գլխավոր հերոսի գործունեության ընթացքը։ Այսպես, օրինակ, առա-
ն գլուխը նա վերնագրել է «8այգալուսի համանվագ»։ Սա մթան ու լույսի բաժանման պահն է, երբ ծն-
ւմ է լույսը. արևավառ առավոտի լույսը։ Այսուղ նա տալիս է հայոց գրականության և արվեստի երկու
նզուգական մեծերի ծնունդը. մեկը՝ Լոռվա Դաեղ գյուղում, մյուսը՝ «Անատոլուի խավար խորքերում»։
Արմանալի գուգադիպություն, նոյն տարում են ծնվել մեր գրականության մեծերից մեկը՝ Հովհաննես
Ռմանյանը և երաժշտական մեծենող մեկը՝ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը։

Այս համակարգը վերաբերության մեջ պահպան է համարվում և առաջարկվում է առաջարկավոր համակարգությունների համար:

Յնտեղ Պ. Ալեքսի, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Ե., 1974, էջ 392: Գրված է «Ժամանակակից Կոմիտասի մասին», գրքի հրա-
պարակման առթիվ:

Տես «Սովետական արվեստ» 1961 N 12: Խակ «Հայրենիք»

Պ Մամի Եղիշեի ժողովածու, հ. 5, Ե., 1974, էջ 392:

Պ Ասմա Երևենի ժողովածու, հ. 6, է., 1976, էջ 226:

Պ. Անդրեասյանի ժողովածու, հ. 6, Ե., 1974, էջ 392: